ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՎԹՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԿԱՑՈՒՄՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՍՍՀ ԴԱ թղթակից անդամ

Արևելքի ժողովուրդների I համագումարը (1920 թ. սեպտեմբերի 1-7) պատմության մեջ մտավ որպես Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության գաղափարների լայն տարածման, Կոմունիստական ինտերնացիոնալի լենինյան քաղաքականության, նրա II կոնգրեսի (1920 թ. հուլիսի 17-օգոստոսի 7, Մոսկվա) բանաձևերի և որոշումների ուղեկցորդ, որպես Արևելքի՝ իրենց սոցիալ-քաղաքական զարգացման մակարդակով, կացութաձևով, հեղափոխական շարժման թափով տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների, ազգային-հեղափոխական կազմակերպությունների ներկայացուցիչների, անկուսակցական, հակագաղութային տրամադրություններով տոգորված մարտիկների հակաիմպերիալիստական համաժողով։

Համագումարի նախօրյակին Ադրբեջանի և Թուրքեստանի ժողովուրդներն արդեն թոթափել էին ազգային և սոցիալական ճնշումը, հաստատել սովետական իշխանություն։ 1920 թ. ապրիլի 28-ին հռչակվել էր Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը, 1920 թ. մայիսի 29-ին՝ Թուրքեստանյան հանրապետությունը, ՌՍՖՍՀ-ի կազմում ազատ զարգանում էին Բաշկիրական (1919 թ. մարտի 23), Թաթարական (1920 թ. մայիսի 27) և Կիրգիզական (1920 թ. օգոստոսի 26) ինքնավար սովետական սոցիալիստական հանրապետությունները, Կալմիկական հանրապետության, Դաղստանի, Չեչենիայի, Կաբարդինո-Բալկարիայի, Ինգուշեթիայի ժողովուրդները։ Հայաստանում, Վրաստանում, Բուխարայում, Խիվայում ուժեղացել էր պայքարը սովետական ազգային պետականության ստեղծման համար, Չինաստանում, Իրանում, Թուրքիայում, Հնդկաստանում թեժանում էր ազգային-ազատագրական պայքարը, Աֆղանստանը հասել էր քաղաքական անկախության։

Համագումարի պատգամավորներին միավորում էր նրանց անսահման ատելությունը գաղութային ճնշման նկատմամբ և իմպերիալիստական գիշատիչներից ազատագրվելու համար պայքարելու վճռականությունը, այն գաղափարը, որ միայն Սովետական Ռուսաստանի՝ համաշխարհային հեղափոխության ջահի, հետ սերտ դաշինքով Արևելքի ժողովուրդները կարող են հասնել իսկական սոցիալական և ազգային ազատագրմանը, թոթափել միջազգային իմպերիալիզմի լուծը։ Ռուսաստանի օրինակով Արևելքի ժողովուրդները համոզվում էին, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո սոցիալիստական պետության կողմից կիրառվող ազգային-պետական շինարարության լենինյան քաղաքականությունը ոչ միայն ժողովուրդների իրավական հավասարության հռչակում էր, այլև դրա գործնական ապահովում։

Ազգային հարցի մասին կոմունիստական կուսակցության և սովետական պետության կարևոր սկզբունքները, որոնք միջազգային խոշոր նշանակություն ունեն, իրենց օրենսդրական ձևակերպումը ստացել էին 1917 թ. նոյեմբերի 2-ին Վ. Ի. Լենինի ստորագրած «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում» և 1918 թ. հունվարի 13-ին սովետների համառուսաստանյան III համագումարում ընդունված «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայում»։ Որպես ազգային քաղաքականության հիմնական սկզբունքներ ընդունվում էին «1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունը և սուվերենությունը։ 2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ

ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև անջատումը և ինքնուրույն պետությունների կազմումը։ 3. Բոլոր ազգային և ազգային կրոնական արտոնությունների և սահմանափակումների վերացումը։ 4. Ռուսաստանի տարածքում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների և էթնիկական խմբերի ազատ զարգացումը»[1]։

Սովետների համառուսաստանյան V համագումարում 1918 թ. հուլիսի 10-ին ընդունված ՌՍՖՍՀ սահմանադրությունը հաստատել էր լենինյան գաղափարներն այն մասին, որ Ռուսաստանի սովետական հանրապետությունը սահմանվում է որպես ազատ ազգերի կամավոր հիմունքով ստեղծված սովետական ազգային հանրապետությունների ֆեդերացիա։ Հոկտեմբերի դրոշի շուրջը Ռուսաստանում բնակվող մուսուլման աշխատավորությանը և Արևելքի ճնշված ժողովուրդներին համախմբելու գործում կարևոր նշանակություն ունեցավ սովետական կառավարության կոչը «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին», որով հռչակվում էր լիիրավ հավասարություն, անկախություն և ճնշված ժողովուրդներին իմպերիալիստական գիշատիչների փաթաթած ամեն տիպի ստորացուցիչ համաձայնագրերի վերացում։ Նշանակալից էր «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որը պաշտպանում էր հայերի ազատ ինքնորոշման իրավունքը։ Սովետական պետության ազգային քաղաքականությունն իր գործնական արտահայտությունը գտավ նաև նրա կողմից Լեհաստանի, Ֆինլանդիայի, Լիտվայի, Լատվիայի և Էստոնիայի ինքնորոշումը ճանաչելու մեջ։

Կոմինտերնի II կոնգրեսը Մոսկվայում և Արևելքի ժողովուրդների համագումարը Բաքվում Վ. Ի. Լենինի գնահատմամբ այն միջազգային համաժողովներն էին, «որոնք համախմբեցին կոմունիստներին և ցույց տվին, որ բոլոր քաղաքակրթված երկրներում և արևելյան բոլոր հետամնաց երկրներում բոլշևիկյան գրոշը, բոլշևիզմի ծրագիրը, բոլշևիկների գործելակերպը՝ դա բոլոր քաղաքակրթված երկրների բանվորների համար, բոլոր հետամնաց գաղութային երկրների գյուղացիների համար փրկության դրոշ է, պայքարի դրոշ, որ իսկապես Սովետական Ռուսաստանը այս երեք տարիների ընթացքում ոչ միայն ետ մղեց նրանց, ովքեր հարձակվում էին իրեն խեղդելու համար, այլև նվաճեց ամբողջ աշխարհի աշխատավորների համակրանքը»[2]։

Արևելքի ժողովուրդների համաժողովի անցկացման գաղափարը ծագեց Կոմինտերնի II կոնգրեսի, որի ուշադրության կենտրոնում էին գտնվում ազգային և գաղութային հարցերը, նախապատրաստման օրերին։ ՌԿ/բ/Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1920 թ. հունիսի 1-ի որոշմամբ այդ հիմնական հարցերի շուրջ կոնգրեսում զեկուցումով հանդես եկավ Վ. Ի. Լենինը։ «Ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ թեզիսների սկզբնական ուրվագծում» հանձարեղ ստրատեգը այլոց թվում նախատեսել էր նաև «Արևելյան ժողովուրդներ», «Պայքար պանիսլամիզմի դեմ», «Հարաբերությունները Կովկասում»[3] կետերը։

ՌԿ/բ/Կ Կենտկոմի և Կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմի կողմից Արևելքի ժողովուրդների I համագումարի նախապատրաստման կազմակերպչական բյուրոյի ստեղծման մասին Վ. Ի. Լենինը հեռագրով հաղորդեց Օրջոնիկիձեին։ Համագումարի խնդիրների վերաբերյալ Կոմինտերնի գործկոմը հատուկ նամակով 1920 թ. հուլիսի 6-ին դիմեց ՌԿ/բ/Կ Կովկասյան երկրկոմին։ Համագումարի նախապատրաստման և նրա խնդիրների մասին տեղեկացվեցին նաև Կոմինտերնի II կոնգրեսի պատգամավորները, ձեռնարկված միջոցառումների մասին ծանուցվեց Կոմինտերնի գործկոմի հաշվետվության «Արևելյան հարցը» բաժնում[4]։

---

1 «Документы внешней политики СССР», т. 1, М., 1957, с. 15.

2 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 41, էջ 426։

3 Վ. Ի. Լենին, Երկ հ. 41, էջ 193։

4 *Г. К. Орджоникидзе*, Статьи и речи в двух томах, т. I (1910—1925 гг.), М., 1956, с. 494; ЦПА ИМЛ при ЦК КПСС. ф. 64, оп. I, ед. хр. 20, л. 99; «Второй конгресс Коммунистического Интернационала. Стенографический отчет». М., 1934, с. XIII, 612—614.

Արևելքի ժողովուրդների I համագումարի հրավիրման կապակցությամբ «Պարսկաստանի, Հայաստանի, Թուրքիայի ստրկացված ժողովրդական զանգվածներին» կոչով դիմեցին Կոմինտերնի գործկոմի, ՌԿ/բ/Կ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ամերիկայի, Լեհաստանի, Հունգարիայի, Բուլգարիայի կոմունիստական կուսակցությունների, Բալկանյան ֆեդերացիայի, Հոլանդիայի, Բրիտանական սոցիալիստական կուսակցության, Անգլիայի ֆաբրիկագործարանային կոմիտեների, Աշխատանքի իսպանական ֆեդերացիայի ներկայացուցիչները՝ Կոմինտերնի երկրորդ կոնգրեսի պատգամավորները[5]։

Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի և նրա Բաքվի կոմիտեի օրգան «Կոմունիստ» (ռուսերեն և հայերեն լեզուներով) և «Ազերբայջանսկայա բեդնոտա» թերթերը հրապարակեցին Կոմինտերնի II կոնգրեսում Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի կոմունիստական կուսակցական կազմակերպությունների պատգամավորների դիմումը Պարսկաստանի, Հայաստանի և Թուրքիայի ստրկացված ժողովրդական զանգվածներին՝ Կոմունիստական ինտերնացիոնալի շուրջը համախմբման, հեղափոխական ուժերի միասնության, եղբայրության և իրենց երկրների կոմունիստական կուսակցությունների ղեկավարությամբ շովինիստներին և նացիոնալիստներին հակահարված տալու կոչով[6]։

Համագումարի նախապատրաստման աշխատանքները ղեկավարում էր Դ. Օրջոնիկիձեի գլխավորությամբ ստեղծված կազմակերպական բյուրոն, որի մեջ մտնում էին Ե. Ստասովան, Ն. Նարիմանովը, Ա. Միկոյանը, Գաբիևը, Վ. Նանեյշվիլին, Թուրքական և իրանական բյուրոների ներկայացուցիչները[7]։ Նախապատրաստական աշխատանքներին ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում ՌԿ/բ/ Կովկասյան երկրային կոմիտեն, կուսակցության Ադրբեջանի Կենտրոնական և Բաքվի կոմիտեները, Թուրքեստանյան պատգամավորության ներկայացուցիչները, Հայկոմկուսի արտասահմանյան բյուրոն։ Համագումարի նախապատրաստման ընթացքը լայնորեն լուսաբանվում էր մամուլում։

Արևմուտքի և Արևելքի պրոլետարական ինտերնացիոնալիստական ուժերի միասնության վառ դրսևորում հանդիսացավ Արևելքի ժողովուրդների I համագումարին Բաքու ժամանած պատգամավորների, ինչպես նաև Ադրբեջանի մայրաքաղաքի բանվորների, գյուղացիների, կարմիրբանակայինների ու նավաստիների դեպուտատների սովետի համատեղ հանդիսավոր նիստը, որտեղ հանդես եկան Անգլիայից՝ Թոմաս Կվելը, Ֆրանսիայից՝ Ալֆրեդ Ռոսմարը, Հունգարիայից՝ Բելա Կունը, ԱՄՆ-ից՝ Ջոն Ռիդը։ «Բաքուն՝ դա նավթ է։ Ամերիկյան կապիտալիզմը ձգտում է համաշխարհային մոնոպոլիա հաստատել նավթի վրա։ Նավթի պատճառով արյուն է հեղվում։ Նավթի պատճառով պայքար է մղվում և ամերիկյան բանկիրներն ու կապիտալիստները ամենուրեք ձգտում են գավթել այն վայրերը, ստրկացնել այն ժողովուրդներին, որտեղ նավթ կա, — ասաց Ջոն Ռիդը 1920 թ. սեպտեմբերի 1-ին Բաքվի սովետի նիստում։—Բաքվում այլևս չկան կապիտալիստներ և այդ նավթը այլևս չի պատկանում կապիտալիստներին։ Եթե դա հնարավոր է Բաքվում, Ռուսաստանում, ապա ինչու չի կարելի հասնել այդպիսի հասարակարգի նաև Ամերիկայում և ամբողջ աշխարհում»[8]։

Բաքվի պրոլետարիատի հանդիսությունները, նավաստիների, բանվորների, երիտասարդության ցույցերն ավարտվեցին անգլո-ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիզմի, նրա առաջնորդներ Լլոյդ Ջորջի, Միլերանի, Վուդրո Վիլսոնի խորհրդանշանական դատ-մերկացումով։ Ազատության հրապարակում ցուցարարները այրեցին նրանց տիկնիկային խրտվիլակները, դրանք դիտելով որպես «եվրոպական և ամերիկյան իմպերիալիզմի խրտվիլակներ»։ Այդ իրադարձությունների մասին անգլիացի գրող, «Ռուսաստանը մշուշում»

---

5 «Коммунистический Интернационал», 1920 № 12, с. 2259—2264.

6 «Կոմունիստ», Բաքու. 31. VIII. 1920։

7 «Коммунист», 28 июля, 1920; 17 августа, 1920.

8 «Первый съезд народов Востока. Стенографический отчет», Баку, 1920, с. 21.

գրքի հեղինակ Հերբերտ Ուելսը գրում էր. «Բաքվում հրավիրվել էր համագումար—սպիտակ, սև, դեղին և դարչնագույն մաշկերով մարդկանց, ասիական տարառների և անսովոր զենքի շվարացուցիչ խճանկար։ Այդ բազմամարդ հավաքը կապիտալիզմի և բրիտանական իմպերիալիզմի նկատմամբ անշեջ ատելության երդում տվեց։ Այնուհետև Բաքվի փողոցներում տեղի ունեցավ հրսկայական շքերթ, որում, ես, ցավոք սրտի, պետք է նշեմ, հանդես եկան նաև բրիտանական հրանոթները, որոնք անզգուշաբար գեն էին նետվել աճապարանքով փախչող «Բրիտանական կայսրության կառուցողների» կողմից։ Փորվեցին, հանվեցին և նորից հանդիսավորությամբ թաղվեցին 26 մարդկանց աճյունները, որոնք առանց դատի գնդակահարվել էին այդ նույն «Բրիտանական կայսրություն կառուցողների» կողմից։ Այրվեցին պ. Լլոյդ Ջորջի, պ. Միլերանի տ. պրեզիդենտ Վիլսոնի խրտվիլակները»[9]։

Համագումարի վեց լիակազմ նիստում, որոնց պատվավոր նախագահ էր ընտրվել Վ. Ի. Լենինը, և չորս սեկցիոն նիստում քննարկվեցին Կոմինտերնի գործկոմի զեկուցումները, Արևելքի ժողովուրդների համագումարի խնդիրները, միջազգային իրադրությունը և Արևելքի աշխատավոր զանգվածների խնդիրները, ազգային, գաղութային և ագրարային հարցեր, Արևելքում սոցիալական շինարարության հարցը։ Ընդունվեցին մի շարք բանաձևեր Կոմինտերնի II կոնգրեսի որոշումների ոգով, Արևելքի ժողովուրդներին ուղղված Մանիֆեստ և Ուղերձ Եվրոպայի, Ամերիկայի և Ճապոնիայի բանվորներին՝ Արևելքի ժողովուրդների ազատագրական շարժմանն աջակցելու կոչով։

26 երկրներից եկած 2045 պատգամավորների ընդունած փաստաթղթերում Արևելքի յուրաքանչյուր գյուղացու, յուրաքանչյուր աշխատավորի պարտքն էր համարվում կանգնել Կոմունիստական ինտերնացիոնալի՝ ամբողջ աշխարհի կոմունիստների միության դրոշի ներքո, պայքարել արևելյան ժողովուրդների գյուղացիների հետ Եվրոպայի և Ամերիկայի բանվորների միավորման համար։ Փաստարկված և հետևողականորեն մերկացվում էր Արևելքում իմպերիալիստական գիշատիչների, հատկապես Անգլիայի, գաղութային քաղաքականությունը, ցույց էին տրվում մասսաների աղքատացումը, արևելյան երկրներում ապրող 800 միլիոն մարդկանց սնանկացումը, սովը, տանջանքները, բացահայտվում էին 35 միլիոն մարդկային կյանք խլած առաջին աշխարհամարտի սարսափները։ Մանիֆեստում մերկացվում էր անգլիական իմպերիալիստների գաղութային քաղաքականությունը Հնդկաստանում, Թուրքիայում, Պարսկաստանում, Միջագետքում, Արաբիայում, Պաղեստինում, Չինաստանում, Կորեայում, Աֆղանստանում։ «Ի՞նչ է անում Անգլիան Հայաստանում և Վրաստանում, որտեղ նա իր ոսկով գյուղացիական ու բանվորական զանգվածներին պահում է նրանց համար ատելի ծախու դաշնակցական ու մենշևիկյան կուսակցությունների լծի տակ, որոնք ահաբեկում ու ճնշում են իրենց ժողովուրդներին և նրանց պայքարի դրդում բուրժուազիայի լծից ազատագրված Ադրբեջանի ու Ռուսաստանի ժողովուրդների դեմ, — ասված է մանիֆեստում։ — Իմպերիալիստական Անգլիան թափանցում է նույնիսկ Թուրքեստան, Խիվա, Բուխարա, Ադրբեջան, Դաղստան, Հյուսիսային Կովկաս։ Կաշառելու համար ամենուրեք վխտում են նրա գործակալները՝ առատորեն վատնելով անգլիական ոսկին, որը ձեռք էր բերված ճնշված ժողովուրդների արյունով ու քրտինքով, ամենուրեք նրանք ջանում են աջակցել բռնապետներին ու բռնակալներին, խաներին ու կալվածատերերին, ջանում են պայքարել սկսվող հեղափոխական շարժումների դեմ, ջանում են ամեն գնով բոլոր ժողովուրդներին պահել ճնշման ու քայքայման, աղքատության ու տգիտության մեջ»։ Մանիֆեստում ընդգծվում էր, որ Արևելյան ժողովուրդների ճնշումն ու քայքայումը, աղքատությունն ու տգիտությունը հարստացման աղբյուր են իմպերիալիստական Անգլիայի համար[10]։

---

9 Г. Дж., Уэллс, Россия во мгле, М., 1959, с. 45.

10 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, էջ 379—389։

«Ռուսական բանվորական հեղափոխության շնորհիվ» «դարավոր քնից արթնացած» Արևելքի բոլոր ժողովուրդներին Մանիֆեստը Կոմունիստական ինտերնացիոնալի դրոշի ներքո իմպերիալիզմի դեմ սրբազան պատերազմի էլ կոչում իրենց երկրների ժողովուրդների ազատագրման համար, մարդկությունը ճնշող և ճնշվող ժողովուրդների բաժանելը ոչնչացնելու համար, բոլոր ժողովուրդների և ցեղերի լիովին իրավահավասարության համար՝ «ինչ լեզվով էլ նրանք խոսեն, մաշկի ինչ գույն էլ ունեն, ինչ կրոն էլ դավանեն»։

Եվրոպայի, Ամերիկայի և Ճապոնիայի բանվորներին հղած Դիմումում համագումարը բացահայտեց Արևելքում իմպերիալիստական ճնշման էությունը, նշեց եվրոպական երկրների պրոլետարիատի մի մասի կողմից արևելյան ժողովուրդների տառապանքները և տանջանքները չհասկանալը, II ինտերնացիոնալի առաջնորդների փարիսեցիությունը։ Դիմումում հստակորեն նշվում էր Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությունը արևելյան ժողովուրդների վրա, նրանց արթնացումը, համախմբումը, պատրաստականությունը հետևելու իրենց կապիտալիստներին և արտասահմանյան ինտերվենտներին հաղթած ռուս բանվորների և գյուղացիների օրինակին։ Համագումարի պատգամավորները հաջողության գրավականը տեսնում էին Եվրոպայի, Ամերիկայի և Ճապոնիայի բանվոր դասակարգի համատեղ պայքարում, ամբողջ աշխարհի ճնշված և շահագործված ժողովուրդների միացյալ ճակատ, իմպերիալիստ-ճնշողների միացյալ ճակատի դեմ հակադրելու մեջ, Արևելքի չքավորագույն գյուղացիության, Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների և Եվրոպայի ու Ամերիկայի հեղափոխական պրոլետարիատի միասնության գաղափարի իրականացման մեջ[11]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Ռուսաստանում ոչնչացրեց հակաժողովրդական պետական կարգը, հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա, ոչ միայն Ռուսաստանի, այլև Արևմուտքի և Արևելքի ժողովուրդների համար բացեց սոցիալական և ազգային ազատագրության ուղի։ Վերջիններս անխուսափելիորեն պետք է հետևեն ռուսական բանվորների և չքավոր գյուղացիների հեղափոխությանը, նշեց Բելա Կունը «Արևելքում սովետական իշխանության մասին» զեկուցման մեջ։ Նա պատգամավորներին բացատրեց սոցիալիստական հեղափոխությամբ ծնված, իշխանությունը աշխատավորների ձեռքը հանձնած սովետական պետական կարգի էությունը, պատմեց սովետների՝ բանվորների և գյուղացիների մարտական, իսկական ժողովրդաիշխանության կառավարման մարմինների մասին, որոնք հասարակական կարգի նորմերը որոշող օրենքներ են ընդունում և կենսագործում։ Բ. Կունը շարադրեց նաև սովետական իշխանության ազգային քաղաքականության սկզբունքները, իշխանության, որը բազմազգ Ռուսաստանի բոլոր աշխատավորների համար հավասարություն է ստեղծել, ճանաչել է բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և իրավահավասարությունը, վերացրել ոչ ռուս ժողովուրդների ճնշումն ու շահագործումը։ Նա հավաստեց այն փաստը, որ ռուսական հեղափոխությունը «չմնաց պետական սահմանների մոտ, այլ որպես ամեն ինչ խժռող բոց տարածվեց Արևմուտք և Արևելք»։

Բ. Կունը մերկացնում էր պատմական ճշմարտության կեղծարարների, իմպերիալիզմի և գաղութարարության ջատագովների պնդումները, որ իբր կապիտալիստական զարգացման, բուրժուական դեմոկրատիայի միջով չանցած ժողովուրդները չեն կարող անցնել սովետական սիստեմին, որ Արևելքի ժողովուրդները չեն հասունացել այնքան, որպեսզի տնօրինեն իրենց ճակատագիրը։ Նա այդպիսի տեսակետը բնորոշեց որպես իմպերիալիստական նպատակ հետապնդող, Արևելքի չքավոր գյուղացիությանն էմիրների, փաշաների, բեկերի, խանների, ամերիկյան և եվրոպական կապիտալիստների տիրապետության տակ պահելու ձգտում[12]։

---

[11] «Народы Востока», Баку, 1920, № 1, с. 62—64.

[12] «Первый съезд народов Востока. Стенографический отчет», с. 174—180.

Այսպիսի հաղցադրումը բխում էր հետամնաց երկրներում ֆեոդալիզմի ամեն մի արտահայտության դեմ ուղղված գյուղացիական շարժմանն աջակցելու և այդ շարժմանն առավել հեղափոխական բնույթ հաղորդելու, սովետական հանրապետությունների և մետրոպոլիտների հեղափոխական պրոլետարիատի հետ Արևելքում գյուղացիական հեղափոխական շարժման ավելի սերտ դաշինք իրականացնելու լենինյան դրույթից։ «Առանձնապես անհրաժեշտ է, — նշում էր Վ. Ի. Լենինը,— «աշխատավորների սովետներ» և այլն ստեղծելու միջոցով բոլոր ջանքերը գործադրել սովետական կարգերի հիմնական սկզբունքներն այն երկրներում կիրառելու համար, որտեղ իշխում են մինչկապիտալիստական հարաբերություններ»[13]։ Այս խնդիրները բխում էին Վ. Ի. Լենինի թեզիսների ընդհանուր գաղափարներից, որոնք Կոմինտերնին պարտավորեցնում էին համընդհանուր օգնություն և աջակցություն ցույց տալու ճնշված ժողովուրդների և ազգերի հակաիմպերիալիստական հեղափոխական ազատագրական պայքարին։ Մենք հանգել ենք միակ ճիշտ այն որոշմանը, ասում էր Վ. Ի. Լենինը, որ պետք է գրեթե ամենուրեք «բուրժուադեմոկրատական» արտահայտությունը փոխարինել «ազգային-հեղափոխական» արտահայտությամբ։ Այդ փոփոխման իմաստն այն է, որ մենք, որպես կոմունիստներ, միայն այն դեպքերում պետք է աջակցենք և աջակցելու ենք գաղութային երկրների բուրժուական ազատագրական շարժումներին, երբ այդ շարժումներն իսկապես հեղափոխական են, երբ այդ շարժումների ներկայացուցիչները մեղ խոչընդոտ չեն հարուցի՝ հեղափոխական ոգով դաստիարակելու և կազմակերպելու գյուղացիությանն ու շահագործվողների լայն մասսաներին»[14]։

«Արևելքում սովետական իշխանության մասին» միաձայն ընդունված թեզիսներում որպես ճշմարտացի ժողովրդաիշխանության օրինակ ներկայացվում էր Սովետական Ռուսաստանի, նրա կազմի մեջ մտնող Բաշկիրական, Կիրգիզական, Թուրքեստանյան հանրապետությունների, Սիբիրի, Հեռավորարևելյան հանրապետության փորձը, որն ապացուցեց, որ «արևելյան երկրների գյուղացիները կարող են կառավարել իրենց գործերը»։ Նրանցում վստահություն էր հայտնվում, որ Արևելքի ժողովուրդները կհետևեն ռուս բանվորների ու գյուղացիների օրինակին, իրենց մոտ կստեղծեն առանց խանների և բեկերի, առանց ճնշողների իշխանություն։ «Ինչպես որ ռուս գյուղացիությունն արդյունաբերական բանվորների աջակցությամբ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ անցկացրեց իր ագրարային հեղափոխությունը և, համախմբվելով սովետներում, պաշտպանում է այժմ կալվածատերերից խլած հողը և շահագործողներից խլած իշխանությանը,— այդպես էլ Արևելքի ճնշված գյուղացիությունն իր հեղափոխական պայքարում հույս է դնում Արևմուտքի հեղափոխական բանվորների, Կոմունիստական ինտերնացիոնալի և գոյություն ունեցող ու ապագա սովետական պետությունների աջակցության վրա»։

Թեզիսներում մերկացվում էին արևմտյան կառավարողների խաբուսիկ լոզունգները պառլամենտարիզմի, հավասարության և ազատության մասին, որոնք ժողովուրդներին թունավորում էին կեղծ հայրենասիրությամբ, շովինիզմով, նացիոնալիզմով։ «Թուրքիայի և Պարսկաստանի պառլամենտականացումը, Վրաստանի՝ մենշևիկների գլխավորությամբ, Հայաստանի՝ դաշնակների գլխավորությամբ, Ադրբեջանի՝ մուսավաթականների գլխավորությամբ վերակազմավորումը դեմոկրատական հանրապետությունների տեղի էին ունենում ազատության և հավասարության լոզունգի ներքո, — նշվում էր թեզիսներում։ — Բոլոր այդ փորձերը, սակայն, պետական չէին նույնիսկ այն բանի համար, որպեսզի ստեղծվեր ժողովրդաիշխանության երևութականությունն»։

Թեզիսներում բացահայտվում էր այսպես կոչված դեմոկրատական ինքնավարության էությունը, որը վարչակազմը հանձնել էր արտոնյալ խավերի ձեռքը, պահպանել էր տնտեսության անկման, ժողովրդական զանգվածներին շքավորության և իմպերիալիստական տերություններից ստրկական կախման

---

13 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 41, էջ 200։

14 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 41, էջ 293։

մատնած հին սիստեմը։ Նրանցում ցույց է տրվում սոցիալիստական լոզունգների քողի տակ գործող ինչպես թուրքական, պարսկական և ադրբեջանական ազգային-բուրժուական կուսակցությունների, այնպես էլ մենշևիկների և դաշնակների կուսակցությունների՝ հավասարության վերաբերյալ հայտարարությունների անհիմն լինելը։

Համագումարում լայնորեն արծարծվեցին նաև Հայաստանի քաղաքական և տնտեսական դրության, նրա նկատմամբ իմպերիալիստական տերությունների փարիսեցիական ու զավթողական քաղաքականության հարցերը։ Դրանք իրենց արտահայտությունը գտան Կոմինտերնի գործկոմի «Կոմինտերնը և Արևելքի ժողովուրդների համագումարի նպատակներն ու խնդիրները», «Միջազգային իրադրության և Արևելքի աշխատավոր զանգվածների խնդիրների մասին», «Ազգային և գաղութային հարցերի մասին» զեկուցումներում, «Արևելքում Սովետական իշխանության մասին» թեզիսներում, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների արտասահմանյան բյուրոյի դիմումում Արևելքի ժողովուրդների համագումար հրավիրելու մասին, երկրում տիրող դրության մասին համագումարում Հայաստանի պատվիրակների զեկուցման մեջ, Հայաստանի աշխատավոր գանգվածների ներկայացուցիչների՝ համագումարի պատվիրակներին ուղղված կոչում, Դիլիջանի, Շամշադինի պատգամավորների զեկուցումներում, Կարսի և Բաթումի մարզերի պատգամավորների դիմումում և համագումարի այլ փաստաթղթերում ու նյութերում։

Հայաստանի ծանր դրությունը հանգամանորեն նկարագրվում էր նաև Կոմինտերնի կոնգրեսում Հայաստանի կոմունիստական կուսակցության պատգամավորության կողմից ներկայացված փաստաթղթերում։ Այդ պատվիրակության կազմում էին Վառլամ Ավանեսովը, Ռուբեն Քաթանյանը, Ամիս Նուրիջանյանը, Հմայակ Նազարեթյանը։

Պատգամավորներին բաժանված և ապա Կոմինտերնի գործկոմի կողմից հրատարակված «Կոմունիզմը Հայաստանում» («Ընդհանուր իրադրությունը». «Ապստամբությունը Հայաստանում», «Սպիտակ տեռորը Հայաստանում») վերտառությամբ փաստաթղթերից ու նյութերից Կոմինտերնի II կոնգրեսի և Արևելքի ժողովուրդների համագումարի պատգամավորներն իմացան արևմտյան տերությունների «բարերարների կողմից» խաբված, թուրքական օկուպանտների արշավանքից ավերված և ամայացված, դաշնակցական կառավարության կողմից սնանկացված Հայաստանի սոցիալ-տնտեսական ճգնաժամային դրության մասին։ «Ստեղծելով բացարձակորեն ճնշված կամ պաշտոնապես հովանավորվող, բայց ըստ էության վասալային ազգային մանր պետությունների շղթան՝ Ավստրիա, Լեհաստան, Լիտվա, Հայաստան, Վրաստան, որպես իր ժամանակավոր հենարան, բանկերի, ածխային և երկաթուղային մոնոպոլիաների օգնությամբ իշխելով նրանց վրա, իմպերիալիզմը դրանց դատապարտում է տնտեսական և ազգային անտանելի դժվարությունների, անվերջանալի կոնֆլիկտների և արյունահեղ բախումների — ծանուցում էր Կոմինտերնի II կոնգրեսը։ Կոնգրեսը ցույց տվեց, որ իմպերիալիզմը ճնշում է ժողովուրդների ազատությունը, խորացնում է այդ երկրների, որոնց թվում և Հայաստանի, իռեգենտը (չազատագրումը), ազգային թարախապալարը[15]։

Ինչպես նշվում էր փաստաթղթերում, Հայաստանի համար իսկական ներքին ազգային թարախապալարը տնտեսական փլուզումն էր, տնտեսության քայքայումը, դաշնակցության հակաժողովրդական քաղաքականությունը, երկիրը կառավարելու նրա անճարությունը և վասալական կախվածությունը իմպերիալիստական մեծ տերություններից, անդադար ազգամիջյան պատերազմները, մասսայական ընչազրկումը, սպեկուլյացիան և կաշառակերությունը, բանվոր դասակարգի չքավոր վիճակը, անտանելի ռեժիմը բանակում, Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքը Սովետական Ռուսաստանից մեկուսացնելու քաղաքականությունը, դաշնակցական կառավարության պայքարը «Հյուսիսից շարժվող պրոլետարական հեղափոխության դեմ և Հայաստանի

15 «Второй конгресс Коммунистического Интернационала. Стенографический отчет», с. 542.

բանվորների ու գյուղացիների դեմ, որոնք պատրաստ են հարելու այդ հեղափոխությանը։ Դաշնակների կործանարար քաղաքականության հետևանքով էր, որ այսպես կոչված «ազատ» և «անկախ» Հայաստանը նացիոնալիստական կառավարողների ձեռքում դարձավ բանվորներից ու գյուղացիներից «անկախ» երկիր, անգլո-ամերիկյան տերերի, սպեկուլյանտների, մաուզերիստների, կուլակների և դենիկինյան սպաների համար ազատ երկիր[16]։

Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին տեղեկացնելով Կոմինտերնի գործկոմի մտադրությունը՝ «խորհրդակցելու Արևելքի ժողովուրդների համագումարի պատգամավորների հետ համաշխարհային իմպերիալիզմի՝ բանվորագյուղացիական խավերի ընդհանուր թշնամու, դեմ վեհ գործի համար մեծ պայքարի մասին», Հայաստանի կոմունիստական կուսակցության Բաքվում գտնվող արտասահմանյան բյուրոն մերկացնում էր դաշնակների հակաժողովրդական քաղաքականությունը, որոնք գործում էին «գիշատիչ ու բռնակալ իմպերիալիստների՝ անգլիական լորդերի, ֆրանսիական բանկիրների և ամերիկյան ֆաբրիկատերերի, թելադրանքով», ձգտելով լուծել հայկական հարցը նրանով, որ «գնդակահարում են ժողովրդի իսկական բարեկամներին՝ Հայաստանի կոմունիստներին, բանվորներին ու գյուղացիներին»[17]։

Իմպերիալիզմի և դաշնակցական ազգայնական կուսակցության հակաազգային քաղաքականությունը մերկացնող փաստաթուղթ էր Հայաստանի աշխատավոր զանգվածների ներկայացուցիչների կոչը՝ ուղղված համագումարին[18]։ «Մենք չենք կարող թույլ տալ,— ասված էր կոչում,— որ Հայաստանը դառնա Սովետական Ադրբեջանի, հեղափոխական Արևելքի վրա իմպերիալիստական Մրևմուտքի հարձակման բազա և դրանով դարեդար խայտառակենք մեզ ամբողջ աշխարհի հեղափոխության առջև։ Մենք չենք կարող թույլ տալ, որ մեր ընդհանուր թշնամին՝ անտանտի իմպերիալիզմը, մեր միջոցով և մեր մեջքով հաղթական երթ կատարի Արևելքի հեղափոխական զանգվածների դեմ։ Մենք մեր ուժերը կմիաձուլենք մեզ հարևան ժողովուրդների ուժերի հետ ընդհանուր թշնամու՝ համաշխարհային իմպերիալիզմի դեմ վերջնական հաղթանակ տանելու համար»։ Հոկտեմբերյան հեղափոխությունը հուշակեց Արևելքի բոլոր ճնշված ժողովուրդներին համաշխարհային իմպերիալիզմի լծից ազատագրելու լոզունգը. Արևելքն արդեն ոտքի է կանգնել և նրա համակրանքը Սովետական Ռուսաստանի կողմն է՝ ընդդեմ համաշխարհային իմպերիալիզմի, և հայ աշխատավորը Սովետական Ռուսաստանի հետ դաշնակցած պետք է ընդհանուր ճակատ կազմի միջազգային իմպերիալիզմի դեմ, երկրում հաստատի սովետական կարգեր, ընդգծում էին Հայաստանի 160 պատվիրակները։

Հայաստանի պատգամավորների զեկուցագրում առանձնահատուկ խոսվում էր միջազգային իմպերիալիզմի կողմից Հայաստանի բանվորա-գյուղացիական զանգվածներին ծաղր ու ծանակի ենթարկելու, երկիրն իրենց ձեռքերում պահելու, նրանցից բուրդ, բամբակ և այլ հումք դուրս քաշելու, Հայաստանը Սովետական Ռուսաստանի դեմ պայքարի պլացդարմի վերածելու իմպերիալիստների ձգտման մասին։

ԱՄՆ-ը հրաժարվեց Հայաստանի մանդատից, քանի որ «Հայաստանի ընդերքը ո՞չ նավթ է պարունակում, ո՞չ էլ պլատին»[19], — այսպիսին էր Կոմինտերնի II կոնգրեսի գնահատականը։ Սակայն առևտուրը մանդատի շուրջը շարունակվում էր. իմպերիալիստները ձեռք չէին քաշում Հայաստանից, որը նրանց առաջին հերթին պետք էր որպես բոլշևիզմի դեմ պայքարի պլացդարմ։

---

16 «Доклады Второму конгрессу Коминтерна», Пг., 1920, с. 390—407; 1921, с. 296—308.

17 «Կոմունիստ», Բաքու, 18. VIII. 1920։

18 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 375—378։

19 «Второй конгресс Коммунистического Интернационала. Стенографический отчет», с. 543.

Ներկայացված փաստաթղթերում կարմիր թելի նման անցնում էր անգլո-ամերիկյան ու ֆրանսիական իմպերիալիստների՝ Հայաստանի և հայերի նկատմամբ երեսպաշտական քաղաքականության, «ազատության ու կուլտուրական զարգացման», քաղցրմեղցր խոստումների մերկացումը։ «Հայերին» խոսքով պաշտպանում էին Անտանտի երկրների բոլոր կառավարությունները, իսկ գործով՝ ոչ ոք։ «II ինտերնացիոնալի ոգի մամուլը զետեղում էր վրդովմունքով լի հոդվածներ հայերի օգտին, Թուրքիայում նրանց ջարդերի դեմ, — ասված էր Կոմինտերնի գործկոմի «Ազգային և գաղութային հարցի մասին», զեկուցման մեջ, — կազմակերպվում էին ազդեցիկ ցույցեր և շքերթներ թուրքական ավազակների արյունալի չարագործությունների դեմ, սակայն այդ բոլորը կապիտալիստական կառավարությունների, նրանց արևելյան քաղաքականության օգտին էր ծառայում»։ Մերկացնելով երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդների փարիսեցիությունը, Կոմինտերնի գործկոմի ներկայացուցիչ Պավլովիչը համագումարում հայտարարեց. «Մենք դատապարտում ենք հայկական ջարդերը և կպայքարենք դրանց դեմ»[20]։

«Միջազգային իրադրության և Արևելքի աշխատավոր զանգվածների խնդիրների մասին» զեկուցման մեջ բերվեցին «Մանչեստր Գարդիան» (Անգլիա) և «Երիտասարդ Հայաստան» (ԱՄՆ) թերթերում տպագրված փաստեր, որոնք մերկացնում էին անգլիական, ֆրանսիական իմպերիալիստների սուտն ու խաբեությունը, թուրք կառավարողների ցեղաջինջ քաղաքականությունը, ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի կողմից Մարաշի մոտ բախտի քմահաճույքին թողնված 20 հազար հայ զինվորների ոչնչացումը թուրքերի կողմից, անգլիացիների գերեզմանային լռությունը, որոնք Միջագետքում ունեին 80 հազար զինվոր, իբր թե արաբներին ազատագրելու համար, «բայց ոչ թե թուրքական բռնությունից, այլ նավթից»։ Հայաստանում նավթ չկա, հայտնի չէ թե ինչից «ազատագրել» հայերին, «անհնարին է հայերին թալանել, դրա համար էլ կարելի է թողնել, որ նրանք թալանվեն» — եզրակացրեց «Մանչեստր Գարդիան» թերթը մայիսի 12-ի համարում տպագրված «Ճգնաժամը Հայաստանում» հոդվածում։ «Եթե համեմատենք անգլիական կառավարության տեսակետը Միջագետքի նավթի, նավթի վերաբերյալ հայերի՝ հայկական արյան վերաբերյալ տեսակետի հետ, ապա այդ համեմատությունն անգլիական կառավարությանը ծածկում է խայտառակությամբ և ամոթով» — այդպես էր գրում Լլոյդ Ջորջին մոտ կանգնած թերթը։ Անգլիական կառավարության երեսպաշտությունը հաստատում է, եզրափակում էր թերթը, որ «Բրիտանական կայսրությունը ամենահզոր մուսուլմանական ուժն է»։

«Մանչեստր Գարդիանի» և մամուլի այլ օրգանների վկայությամբ ՌՍՖՍՀ-ի հետ Հայաստանի բանակցություններն Անտանտի երկրների կառավարող շրջաններում դիտվում էին որպես դավաճանություն իրենց հանդեպ, «բոլշևիզմ» և «հայեր» հասկացությունները հոլովվում էին որպես համանիշներ, որակվում էին որպես «մի կտավի կտոր»[21]։

Ամերիկյան իմպերիալիզմը մերկացնող և խարազանող փաստաթուղթ է հանդիսանում Կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմի անդամ «10 օր, որոնք ցնցեցին աշխարհը» գրքի հեղինակ Ջոն Ռիդի Բաքվի համագումարին ներկայացրած գրավոր խոսքը[22]։

Ռիդը Ֆիլիպինների, Կուբայի, Մեքսիկայի, Հաիթիի և Կենտրոնական ու Լատինական Ամերիկայի այլ երկրների ժողովուրդների և ԱՄՆ-ի նեգրերի նկատմամբ ամերիկյան իմպերիալիզմի գիշատիչ քաղաքականության օրինակով բացահայտեց «անշահախնդիր օգնության» և գաղութների ժողովուրդների ազատագրման, «նրանց կերակրելու և պաշտպանելու» մասին ամերիկյան գաղութարարների հայտարարությունների երեսպաշտությունը։ «Ամերիկյան կա-

---

20 «Первый съезд народов Востока. Стенографический отчет», с. 141.

21 «Manchester Quardian», 12 V, 1920; «Первый съезд народов Востока. Стенографический отчет», с. 59; *Երիտասարդ Հայաստան, Ֆիկագո, 8, II, 7, 17, IV, 1920։*

22 «Первый съезд народов Востока. Стенографический отчет», с. 120—125.

պիտալիստները ներկայումս Մերձավոր արևելքի ժողովուրդներին են դիմում բարեկամական խոսքերով, պարենամթերք ուղարկելու խոստումներով։ Դա հատկապես վերաբերում է Հայաստանին և շատ հայեր այժմ սպասում են օգնության ձեռք Ամերիկայից, — նշում էր Ջ. Ռիդը։ — Այդ նույն ամերիկյան կապիտալիստները թունավորում են Ամերիկայի բանվորներին և գյուղացիներին միմյանց դեմ, նրանք սովամահ են անում և շահագործում են Կուբայի և Ֆիլիպինյան կղզիների ժողովուրդներին, նրանք գազանորեն սպանում և կենդանի այրում են Ամերիկայի նեգրերին, փողոց շպրտում ուժասպառ, հյուծված ամերիկացի բանվորներին, որոնք մեռնում են սովից»։ Նա նշում էր, որ ԱՄՆ-ում ապրում են 10 մլն նեգրեր, որոնք չունեն ո՛չ քաղաքական, ո՛չ քաղաքացիական իրավունքներ, կապիտալիստները սպիտակ բանվորներին գրգռում են նրանց դեմ, սպիտակ և սև ռասսաների միջև բախումներ են հրահրում։ Ջ. Ռիդը բացատրում էր, որ Արևելքի ժողովուրդները դեռ չգիտեն «Ազատ Ամերիկայի» իսկական դեմքը, դեռ իրենց վրա չեն փորձել Ամերիկայի իշխանությունը, որին լավ ծանոթ են Ֆիլիպինների բանվորները և գյուղացիները, Կենտրոնական Ամերիկայի, Կարիբյան ծովի կղզիների ժողովուրդները։

Բացահայտելով ամերիկյան իմպերիալիզմի դիմակավորված քաղաքականությունը որպես բռնության, կողոպուտի և խաբեության քաղաքականություն, Ջ. Ռիդը բացատրում էր, որ «քեռի Սեմը երբեք ձրի ոչինչ չի տալիս, նա հայտնվում է մի ձեռքում ծղոտե լեցուն պարկով, մյուսում՝ մտրակով։ Ով ընդունում է քեռի Սեմի խոստումը որպես մաքուր և անկեղծ, նա հարկադրված վճարում է քրտինքով և արյունով»։ Սովյալ ժողովուրդներին խոստանալ պարենամթերք և միաժամանակ կազմակերպել սովետական հանրապետությունների բլոկադա, ժողովուրդներին ներքաշել Սովետական Ռուսաստանի դեմ պատերազմում, այդպիսին է Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքականությունը։

Այդ մեթոդը կիրառվեց նաև Սովետական Ռուսաստանի հետ դաշինք կնքած Հունգարիայի, Ֆինլանդիայի, Էստոնիայի, Լիտվիայի նկատմամբ։ «Այժմ ամերիկյան կառավարությունը նրանց այլևս պարենամթերք չի առաջարկում, նրանք այլևս Ամերիկային պետք չեն և նրանց ժողովուրդները կարող են մատնվել սովի» — հավաստում էր Ջ. Ռիդը։ Եվ ապա՝ «Ամերիկյան կապիտալիստները Հայաստանին հաց են խոստանում։ Դա հին խաբեություն է։ Նրանք հաց են խոստանում, բայց երբեք չեն տա։ Հունգարիան հաց ստացա՞վ սովետական կառավարության անկումից հետո։ Ոչ։ Հունգար ժողովուրդը մինչև օրս էլ սովի է մատնված։ Բալթիական երկրները արդյո՞ք ստացան հաց։ Ոչ։ Ամերիկյան կապիտալիստները միավորվել են այլ երկրների կապիտալիստների հետ, և վախենում են, որ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կհետևեն Սովետական Ռուսաստանի, Սովետական Ադրբեջանի և մյուս սովետական հանրապետությունների օրինակին, իշխանությունը կվերցնեն իրենց ձեռքը, կըսկսեն աշխատել իրենց համար՝ ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների հետ ստեղծելով միասնական ճակատ ընդդեմ համաշխարհային իմպերիալիզմի»։ Ջ. Ռիդը փաստարկված, բովանդակալից և համոզիչ ցույց տվեց Հայաստանին օգնելու մասին ամերիկյան կապիտալիստների հայտարարությունների կեղծությունը, նրանց երեսպաշտությունը, սենատոր Լոջի՝ հայերի իրավունքների «պաշտպանի» և այսպես կոչված «Հայերի օգնության Ամերիկյան կոմիտեի» գործչի օրինակով մատնանշեց ամերիկյան իմպերիալիզմի իսկական «բարքերը», նրա փարիսեցիությունը։ «Շատ հայեր շնորհակալ են Ամերիկայից պատերազմի ժամանակ Թուրքերի գազանություններից տառապող հայերի նկատմամբ նրա վերաբերմունքից։ Բայց Ամերիկան ի՞նչ արեց հայերի համար, բացի մերկապարանոց հայտարարություններից։ Ոչինչ» — նշում էր Ջ. Ռիդը։ Նա օրինակ բերեց, թե ինչպես 1915 թ. Կոստանդնուպոլսում ամերիկյան միսիոներները հրաժարվեցին բողոքել Թուրքերի գազանությունների դեմ՝ պատճառաբանելով, որ իրենք շատ կայք և սեփականություն ունեն Թուրքիայում, դրա համար էլ կարիք չկա «Թուրքերին նեղացնել»։ Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանորդ, միլիոնատեր, բազմաթիվ ձեռնարկությունների տեր Շտրաուսը առաջարկեց բոլոր հայերին տեղափոխել Ամերիկա, որ-

պեսդի նրանց աշխատեցնեն հանքերում և ֆաբրիկաներում որպես էժան աշխատուժ։

Իր իսկ առաջադրած «Ինչու են ամերիկյան կապիտալիստները խոստանում Հայաստանին օգնություն և պարեն, արդյո՞ք դա մարդասիրություն է» հարցին Ջ. Ռիդը կտրականապես պատասխանում է՝ ոչ։ «Եթե դա այդպես է, թող կերակրեն Կենտրոնական Ամերիկայի ժողովուրդներին և օգնեն Ամերիկայի նեգրերին»։ Գլխավոր պատճառն այն է, բացատրում էր Ջ. Ռիդը, որ Հայաստանում կան նյութական հարստություններ և հայերը հանդիսանում են էժան աշխատանքի մեծ շտեմարան, որը կարող է շահագործվել ամերիկյան կապիտալիստների կողմից։ «Ամերիկյան կապիտալիստները ցանկանում են շահել հայերի վստահությունը Հայաստանի վրա իրենց թաթը դնելու և հայ ազգը ստրկացնելու նպատակով» — գրում էր նա։

Սակայն Ամերիկայի կապիտալիստների այդ ձգտումը հանդիպեց հայ ժողովրդի դիմադրությանը։ Համագումարին ներկայացված փաստաթղթերում Հայաստանի աշխատավոր զանգվածների ներկայացուցիչները հայտարարեցին պրոլետարիատի դիկտատուրայի, Կոմինտերնի գաղափարների հաղթանակի, սովետական իշխանության հաստատման, Սովետական Ռուսաստանի և մյուս սովետական հանրապետությունների հետ միավորման, միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարի շարունակման իրենց պատրաստականության մասին։ Նրանք լավ գիտեին, որ կա ազատագրման մեկ ուղի, Ջոն Ռիդի խոսքերով ասած. «միավորվել ռուս բանվորների ու գյուղացիների հետ, որոնք տապալեցին իրենց կապիտալիստներին և որոնց Կարմիր բանակը հաղթեց օտարերկրյա իմպերիալիստներին», հետևել Կոմունիստական ինտերնացիոնալի Կարմիր աստղին։

Կոմունիստական ինտերնացիոնալը փորձելով օգտագործել, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, որպես «մոդա և հրապուրանքի առարկա»[23]; հեռահիմպերիալիստական շարժման ընդհանուր հոսանքի մեջ էին խցկվել նաև Էնվեր փաշայի նման քաղաքական բախտախնդիրները։ Նրանք հույս ունեին Կոմինտերնի նկատմամբ փարիսեցիական աճպարարությամբ Արևելքի ժողովուրդների համագումարն օգտագործել իրենց նպատակների՝ քրիստոնեության դեմ «սրբազան» պատերազմի համար, պատգամավորների մեջ բորբոքել պանթուրքիզմ և պանիսլամիզմ։ Երիտթուրքական կառավարության ռազմական միսիստր Էնվերը, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության հրահրողներից և կենսագործողներից, Անդրկովկասի դեմ ռազմական ինտերվենցիայի ոգեշնչողներից և պանիսլամիզմի ու պանթուրքիզմի գաղափարախոսներից ու ջատագովներից մեկը, Բեռլինից գալով Բաքու, փորձում էր մուտք գործել համագումար, իրեն ներկայացնել որպես Մարոկկոյի, Ալժիրի, Թունիսի, Եգիպտոսի, Տրիպոլիի, Արաբիայի և Հնդկաստանի հեղափոխական կազմակերպությունների միությունների դեսպանորդ, համագումարում հանդես գալ «նրանց անունից և հանձնարարությամբ», խնդիր դնելով իր ղեկավարությամբ ստեղծել իսլամական բանակ՝ Արևելքի մահմեդական երկրներն իբր թե իմպերիալիզմի դեմ ոտքի հանելու համար։ Սակայն պատգամավորների ճնշող մեծամասնությանը լավ հայտնի էին Էնվերի իսկական դեմքը, երիտթուրքերի չարագործությունները։ Նրան արգելեցին մասնակցել համագումարին։ Եվ չնայած դրան, պատմության թուրք կեղծարարները և հակասովետական քաղաքագետները կրկնելով քեմալականների ստեղծած «կառավարական կոմունիստական կուսակցության» երիտթուրք պարագլուխների հերյուրանքները, հորինում են կեղծ վարկածներ «հզոր» Էնվերի, «խալիֆի փոխանորդի», համագումարի վրա նրա թողած «հրաշագործ» ազդեցության մասին, նրան վերագրելով Արևելքի ժողովուրդների I համագումարի ղեկավարներից մեկի դերը։ Այդ անհեթեթությամբ զինվել է և դաշնակցական պրոպագանդան՝ իր հրատարակություններում տպելով հորինվածքներ և արտատպելով թուրք գրչակների թերթերից կեղծիքներ։ Փարի-

23 Վ. Ի. Լենին, նույն, հ. 40, էջ 160։

զում հրատարակվող «Հառաջ» թերթը 1930 թ. հոկտեմբերին գրում էր. «Բոլշևիկները 1920 թ. Բաքվում կազմակերպեցին այսպես կոչված Արևելքի ժողովուրդների առաջին համագումար Կոմունիստական ինտերնացիոնալի այն ժամանակվա առաջնորդների ... և Էնվեր-փաշայի ղեկավարությամբ»[24]։ Դաշնակցականների նպատակը պարզ էր. փորձել սևացնել բոլշևիկներին, աշխատավորության զանգվածների մոտ առաջ բերել զայրույթ ու ցասում, ատելություն բոլշևիկյան կուսակցության և Սովետական Ռուսաստանի հանդեպ։

Դաշնակցական պրոպագանդան ավելի հեռու գնաց. նույն թերթի 1937 թ. օգոստոսյան համարներում նրանք զետեղեցին մի գլուխ՝ թուրք հեղինակ Մուհամեդ Էսայի բեյի «Ալլահը մեծ է» գրքից, որը լույս է տեսել նաև ֆրանսերեն։ Այն կոչվում էր «Լենինյան ինտերնացիոնալն ընդդեմ Ալլահի ինտերնացիոնալի»։ Հեղինակը բացահայտ աղավաղելով փաստերը, գրում էր, որ Վ. Ի. Լենինն ընդունելով Էնվերին, իբր ձգտում էր օգտագործել նրա փառքը, որի շնորհիվ բոլշևիկները կարող էին հնարավորություն ստանալ հեղափոխության բոցը եվրոպական երկրների ասիական գաղութները տեղափոխելու, Հնդկաստանը նվաճելու համար։ «Տարբեր նպատակներ ունեցող երկու գործիչները հասան համաձայնության։ Էնվեր փաշան եկավ Բաքու «ճնշված ժողովուրդների համագումար», քարոզելու արևելքի ժողովուրդների շուտափույթ ազատագրում»։ Ֆանտաստիկ է հեղինակի նաև հետևյալ հերյուրանքը. «Երբ Կոմինտերնի նախագահի ճառի ժամանակ դահլիճ մտավ Էնվեր-փաշան, բոլոր պատգամավորները շվարած, նրա առաջ ծնկի իջան և համբուրում էին նրա ձեռքերը։ Նիստն ընդհատվեց։ Բոլոր պատգամավորները դուրս եկան համագումարի դահլիճից և լցվեցին մեջիթ՝ աղոթելու»[25]։

Փաստերն այլ բան են ասում. Վ. Ի. Լենինը երբեք չի ընդունել Էնվերին, չի հանդիպել նրա հետ։ Այդ մասին փաստեր չկան և չէին էլ կարող լինել։ Սովետական կառավարությունը կասկածանքով էր վերաբերվում Էնվերին, չէր հավատում նրա փարիսեցիական հայտարարություններին։ Էնվեր փաշան, գտնվելով Բաքվում, մերժում ստացավ համագումարի աշխատանքներին մասնակցելու, և համագումարի նիստերի դահլիճ նա չմտավ։ «Բաքվում գտնվող երկու հայտնի թուրք քաղաքական գործիչներ, որոնք չեն հանդիսանում մեր համագումարի պատգամավորներ, մեզ՝ նախագահությունն են ուղարկել իրենց գրավոր հայտարարությունները և քանի որ այդ հայտարարություններն ունեն խոշոր քաղաքական նշանակություն, նախագահությունը որոշեց դրանք հրապարակել ամբիոնից և մամուլում։ Դրանցից մեկը պատկանում է Էնվեր-Փաշային, իսկ մյուսը՝ Իբրահիմ Թալիին՝ անգորական թուրքական կառավարության ներկայացուցչին»։ Այսպիսին է համագումարի նախագահ Զինովևի հայտարարությունը, այսպիսին է սղագրական հաշվետվության գրառումը[26]։

«Այդ ժամանակ Բաքվում գտնվող Էնվեր փաշան համագումարի պատգամավոր չէր, նրան թույլատրվել էր միայն գրավոր ուղերձ ուղարկել համագումարին» — գրում է համաժողովի մասնակից ֆրանսիացի Ա. Ռոսմարը։ Նա Էնվեր փաշայի հայտարարությունը գնահատել է որպես արտաքնապես բարենպաստ «Սովետական Ռուսաստանի, բոլոր ճնշվածների բնական դաշնակցի» և երրորդ ինտերնացիոնալի նկատմամբ, իսկ «ըստ էության օրթոդոքսալ նացիոնալիստական բնույթի մանիֆեստ»[27]։

Էնվեր փաշան գունազարդված ներկայացվեց նաև Հալլեում տեղի ունեցած Գերմանիայի անկախ սոցիալիստական կուսակցության համագումարում

---

24 «Հառաջ», 6. X. 1930։ Այս հերյուրանքները վերջերս կրկնեց նաև ժակ Դևսոժին՝ ֆրանսերենով հրատարակված իր «Նեմեսիս օպերացիան» գրքում, տես՝ Jacques Derogy, Operation Nemesis, Fayarol, 1986.

25 «Հառաջ», 6,7. VIII. 1937։ Mahammed Essad bey, Allah est grand., Paris, 1937.

26 «Первый съезд народов Востока. Стенографический отчет», с. 108.

27 Alfred Rosmer, Nloscou sous Lénine: 2 vols, Paris 1970, vol. I, c. 144.

(1920 թ. հոկտեմբերի 12-17-ը)։ Այդ փորձերին միացավ և համագումարին ներկա գտնվող մենշևիկ Մարտովը, որը սխալ գնահատեց Բաքվի համաժողովի արդյունքները։ Հարցի ոչ ճիշտ մեկնաբանումը Հալլեթի համագումարում առիթ տվեց անգլիացի պատմաբան Կարի կողմից Կոմինտերնի ստրատեգիային և տակտիկային տրված սխալ գնահատականին։ Կարի կարծիքով արևելյան ժողովուրդների նկատմամբ Կոմինտերնի վերաբերմունքը որոշվում էր սովետական արտաքին քաղաքականության շահախնդիր նպատակներով։ Նա ևս կարծում էր, որ «էնվերը սովետական քաղաքականության համար կարող էր արժեքավոր ձեռքբերում լինել»։ Սակայն իր սխալ եզրակացությունը հենց ինքը ժխտում է հետևյալ փաստարկումով այն մասին, թե «դժվար էր նրան երաշխավորել որպես ազգային ազատագրության և, առավել ևս, համաշխարհային հեղափոխության մարտիկի»։ Բնորոշելով էնվերին, Կարը արդարացիորեն գրում էր. «էնվերը պրոլետարիատի կամ ճնշված ազգերի մարտիկ չէր։ Նա հայտնի հայկական ջարդերի հեղինակներից մեկն էր»։ Մատնանշելով, որ «Համագումարին մասնակցում էր հայկական պատգամավորների մեծ խումբ» Կարը նշում էր. «էնվերն անձամբ չներկայացավ համագումար»[28]։

Համագումարում հրապարակված էնվեր-փաշայի դեկլարացիան[29] և անատոլիական կառավարության ներկայացուցիչ Իբրահիմ Թալիի հայտարարությունը[30] թափանցված էին երեսպաշտությամբ և նենգությամբ։ Էնվերը «շնորհակալություն» էր հայտնում Կոմինտերնին, որը հնարավորություն էր տվել «համաշխարհային իմպերիալիզմի և կապիտալիզմի դեմ կռվողներին» այդ թվում և իրեն էնվերին, ժամանելու Բաքու, հայտարարում էր, որ դեպի 3-րդ ինտերնացիոնալը իրեն բերել է ոչ միայն իմպերիալիզմի դեմ պայքարում հնարան գտնելու ձգտումը, այլև «սկզբունքների նմանությունը»։ Հաճոյախոսելով Կոմինտերնին և Սովետական Ռուսաստանին, նա փորձում էր պատերազմի մեջ Թուրքիայի մտնելն արդարացնել երկրի «անկախությունը» պահպանելու ձգտումով։ Էնվերը «հավատացնում էր» համագումարին գերմանական իմպերիալիզմի կողմից ստիպված պատերազմելու իր դրման մասին։ «Ես նույնքան ատում և անիծում եմ գերմանական իմպերիալիզմը և գերմանական իմպերիալիստներին, ինչքան անգլիական իմպերիալիստներին» — փարսեցիաբար հայտարարում էր էնվերը։

Թուրքական կառավարության զավթողական գործողությունները Տրիպոլիի և Ադրբեջանի նկատմամբ և նրանց օկուպացիան էնվերն իր դեկլարացիայում բացատրում էր ոչ թե իրապես իմպերիալիստական ձգտումներով, այլ իբր թե «նրանց փրկելու» նպատակով։ Նա հայտարարում էր. «Մենք ձգտում էինք փրկել Տրիպոլին տրիպոլիտանացիների համար։ Ադրբեջանի նկատմամբ մենք ևս այլ մտադրություն չունեինք։ Մենք գտնում ենք, որ Ադրբեջանը պատկանում է ադրբեջանցիներին»։ Էնվերը փորձում էր հավատացնել, որ «Եթե այժմյան Ռուսաստանը գոյություն ունենար այն ժամանակ և պատերազմ մղեր այժմյան նպատակներով, մենք, ինչպես հիմա, ողջ եռանդով հանդես կգայինք նրա կողմից»։ Սակայն էնվերը գերազանց գիտեր, որ Սովետական Ռուսաստանը գոյություն ուներ 1917 թ. հոկտեմբերի 25-ից, գոյություն ուներ և Բաքվի Կոմունան, որը Սովետական իշխանություն էր հռչակել ողջ Ադրբեջանում։ Բայց չէ որ իրեն Սովետական Ռուսաստանի բաղկացուցիչ մաս համարող Կոմունայի դեմ 1918 թ. ամռանն իրենց զորքերը ուղղեցին էնվեր փաշան և նրա համախոհները։ Նրանք գրավեցին Բաքուն և այնտեղից հեռացան միայն առաջին աշխարհամարտում կենտրոնական տերությունների պարտությունից հետո։

Սրբապղծորեն էին հնչում էնվերի խոսքերը Թուրքիայի տարածքում ապրող ժողովուրդների ինքնորոշման իրավունքի՝ իբր նրանց իրավահավասարության մասին։ «Հաշվի առնելով ժողովրդի ցանկությունը, — նշում էր նա, —

---

[28] E. Carr., the Bolshevik Revolution 1917—1923, London, 1954, vol. 3, pp. 264—267.

[29] «Первый съезд народов Востока. Стенографический отчет», с. 113—116.

[30] Նույն տեղում, էջ 77—78։

մենք կողմ ենք նրան ինքնորոշման իրավունք տրամադրելուն։ Մենք մեզ համարում ենք ամուր կապերով ամբողջ կյանքում կապված նրանց հետ, ովքեր ցանկանում են ապրել մեզ հետ։ Ով դա չի ուզում, մենք ցանկանում ենք իրավունք վերապահել, որ իրենք տնօրինեն իրենց ճակատագիրը»։

Անատոլիական գյուղացիության ճակատագիրը կապված է 3-րդ ինտերնացիոնալի ճակատագրի հետ, Էնվերին արձագանքում էր Իբրահիմ Թալին։ «Ժողովրդահեղափոխական կառավարությունը պատրաստ է օգտվելու ռուսական հեղափոխության սոցիալական և բարոյական արդյունքներից», ամենայն անկեղծությամբ այն կընդունի «Սովետական Ռուսաստանի կողմից Անատոլիային մեկնված բարեկամական ձեռքը»։

Էնվերին կրկնում էր նաև Թուրքիայի պատգամավոր Վազարդին Շաքիրը, հայտարարելով, որ իբր Թուրքիան առաջին աշխարհամարտի մեջ մտավ հարկադրված, «ինքնապաշտպանության» համար, որ ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում, նա իբր չուներ զավթողական, նվաճողական նպատակներ, այլ ցանկանում էր Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստեղծել բուֆերային պետություններ՝ հայկական, ադրբեջանական, վրացական, և որ նա չէր ձգտում նվաճել օտար հողեր[31]։

Կեղծ և քաղցրմեղցր խոսքերի կեղևի տակ Էնվերը, Թալին և Շաքիրը ձգտում էին քողարկել հայկական հրեշավոր ցեղասպանության, հայերի ոչնչացման, այդ հանցագործությունների համար երիտթուրքերի պատասխանատվության, թուրքական էքսպանսիոնիստների՝ ոչ միայն Հայաստանը, այլև Ադրբեջանը նվաճելու պլանների, հենց Թուրքիայում կոմունիստների հետապնդումների, ձերբակալությունների և մահապատիժների մասին պատմական ճշմարտությունը։ «Բոլշևիկյան կոմունիստական սիստեմն անհամատեղելի է Թուրքիայի սոցիալական պայմանների և ավանդույթների հետ։ Անատոլիայում վերջին ժամանակներս կազմակերպված կոմունիստական կուսակցությունները փակվել են», — հայտարարել էր Մուստաֆա Քեմալը «Թայմս» թերթի թղթակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ։ Ահա մեկ այլ հատված Քեմալի արտահայտություններից. «Կոմունիզմը՝ սոցիալական հարց է։ Մեր երկրի դրությունը և սոցիալական պայմանները մեզ թույլ չեն տալիս ընդունել կոմունիզմը։ Վերջերս այդ նպատակի համար կազմակերպված կուսակցությունները գիտակցեցին այդ անհնարինությունը և դադարեցրին իրենց գործունեությունը»[32]։

Հայտնի է, որ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ Թուրքիայի կառավարության ստեղծումից հետո 1920 թ. ապրիլին սովետական կառավարությունը Թուրքիայի և Հայաստանի միջև բանակցություններում միջնորդ հանդես գալու պատրաստակամություն հայտնեց։ Սակայն «քեմալական կառավարությունը մերժեց ավելի վաղ իր կողմից ընդունված սովետական կառավարության միջնորդությունը դաշնակցական Հայաստանի հետ բանակցություններում։ Այն շարժեց իր զորքերը Հայաստանի դեմ, ռեակցիոն տարրերը տերիտորիալ զավթումներ էին երազում ողջ Անդրկովկասում»[33]։

Էնվերի և Թալիի կեղծ հեղափոխական ճամարտակություններին միահամուռ հակահարված տրվեց համագումարի ընդունած բանաձևում։ Համագումարը Կոմինտերնի II կոնգրեսի ոգով հայտարարեց այն համազգային հեղափոխական շարժումներին աջակցելու մասին, որոնք ձգտում են Արևելքի ճնշված ժողովուրդներին ազատագրել շահագործման լծից։ Համագումարը հաստատեց, որ Թուրքիայում շարժումն ուղղված է միայն օտար ճնշողների դեմ և «նրա հաջողությունը բոլորովին էլ չէր նշանակի թուրք գյուղացիների և բանվորների ազատագրում ճնշումից և շահագործումից ընդհանրապես։ Այդ շարժման հաջողությունը իր հետ չէր բերի թուրքական աշխատավոր դասակարգերի համար

---

31 Նույն տեղում, էջ 77—78։

32 «Бюллетень Народного коммиссарната иностранных дел РСФСР», № 68, 20 марта 1921, с. 34—35.

33 «История внешней политики СССР, 1917—1943», т. I, М., 1976, с. 145.

ամենակարևոր հարցի՝ ագրարային հարցի լուծումը և չէր վերացնի Արևելքի ազատագրության ամենագլխավոր խոչընդոտները՝ ազգային բախումները»։

Էնվերի նկատմամբ վստահություն չարտահայտելով, համագումարն անհրաժեշտ համարեց ցուցաբերել «առանձնահատուկ զգուշություն շարժման այն առաջնորդների նկատմամբ, ովքեր անցյալում իմպերիալիստական մի խմբի շահերի համար թուրք գյուղացիներին ու բանվորներին սպանդի էին տանում և այդպիսով Թուրքիայի աշխատավոր զանգվածներին հանգեցրին կրկնակի կործանման հարուստների և բարձր սպայության փոքր խմբի շահերի համար»[34]։

Դեպի Անդրկովկաս թուրքական արշավանքի էությունը և թուրքերի գործողությունները, Ադրբեջանի, Բաքվի հարուստ նավթահանքերի զավթումը, թուրքական օկուպանտների «ազատագրական» առաքելությունը, ինչի մասին ճամարտակում էին Էնվերը և մյուսները, բոլոր կետերով մերկացվեցին Պավլովիչի զեկուցման մեջ, Ադրբեջանի պատգամավոր Դաղաշ Բունյաթ Զադեի, Դաղստանի պատգամավոր Ջալալեդին Կորկմասովի, Իրանի պատգամավոր Հեյդար խանի ելույթներում։ «Թուրքական զորքերը գերմանական սվիններ օգնությամբ գրավեցին Ադրբեջանը իր նավթահանքերով, — ասում էր Դաղաշ Բունյաթ Զադեն, — նացիոնալիստները հայտարարեցին, որ իբր թուրքերը Էնվեր փաշայի գլխավորությամբ այստեղ են հայտնվել ժողովրդին փրկելու համար, այս երկրին հանրապետություն, ինքնորոշում, ինքնուրույնություն տալու համար։ Դա սուտ է»։ Թուրքերը «քշելով անգլիացիներին, իրենք նստեցին նրանց տեղերում, որպեսզի ծծեն այդ երկրների հյութերը»։ «Այսօր Սովետական Ադրբեջանը ազատագրվել է այդ խմբերից և կուսակցություններից՝ թուրքական և գերմանական իմպերիալիստների կողմից առաջ քաշված մանեկեններից», հայտարարեց Դաղաշ-Զադեն[35]։

Հեյդար խանն իր ելույթում ցույց տվեց թուրքական կառավարողների զավթողական քաղաքականությունը, օտար հողեր նվաճելու նրանց ձգտումը, թուրքական իմպերիալիստների յատագովների հայտարարությունների անհիմն լինելը։ «Այդ հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, ընկերներ։ Թուրքիան ուներ մեծ իմպերիալիստական ձգտումներ, նա լրիվ կերպով զենք էր գերմանական իմպերիալիզմի ձեռքերում»[36], — հայտարարեց Հեյդար խանը։

Ջ. Կորկմասովը, որը ելույթ ունեցավ հյուսիսկովկասյան մուսուլմանների կողմից, Էնվերին բնութագրում էր որպես «լեռնական հակահեղափոխության կազմակերպման հատկապես ջանասեր գործիչ»։ «Դաղստանում հայտնվեցին երիտթուրքեր Յուսուֆ փաշան, Նուրի փաշան (Էնվեր փաշայի եղբայրը), տարբեր փաշաներ և բայեր, որպեսզի աշխատավորների դեմ ճակատ ստեղծեն և շնորհիվ բիչերախովյան կուլակների ու նիկոլաևյան սպաների կարողացան որոշ ժամանակով տապալել սովետական իշխանությունը Դաղստանում, — ասաց Ջ. Կորկմասովը։ Թուրքերը ձերբակալում էին բոլշևիկներին, նրանց ընտանիքները հարկում էին ռազմատուգանքով, լեռնցի չքավորության դեմ իսկական ռազմաճակատ էին բացել, սպանում էին. կախում, երկրամասը հեղեղել էին արյամբ, և այդպես 12 ամիս, մինչև որ չվերականգնվեց սովետական իշխանությունը»[37]։

Բացահայտելով Էնվերի կառավարած Թուրքիայի ռազմատենչ քաղաքականությունը, որը կործանեց միլիոնավոր անմեղ մարդկանց, Պավլովիչը նշում էր. «Բրեստի կոնֆերանսում թուրք ներկայացուցիչների վարքը վրդովեցուցիչ էր։ Բայց թուրք-նացիոնալիստները չբավարարվեցին Բրեստի պայմանագրի հրեշավոր պայմաններով։ Թուրքիան գրավեց Արգահանը, Կարսը, Բաթումը։ Ավելին, թուրքական զորքերն ավելի հեռուն գնացին և գրավեցին Ս. Խալցխան, Ալեքսանդրապոլը։ Թուրքերը նետվեցին Ադրբեջանի վրա և զավ-

---

34 «Первый съезд народов Востока. Стенографический отчет», с. 116—117.

35 Նույն տեղում, էջ 79—80։

36 Նույն տեղում, էջ 94—95։

37 Նույն տեղում, էջ 148։

թեցին Բաքուն։ Թուրքական երկամսյա տիրապետությունը՝ բազմաշարշար ժողովրդի, Կովկասի պրոլետարիատի հաստատուն պատվարի, պատմության ամենամռայլ էջն է»[38]։

Պատգամավորների բազմաթիվ ելույթներում և համագումարի նյութերում ասվում էր, որ քեմալական շարժումը Թուրքիայում կոմունիստական չէ, իսկ Անկարայի կառավարության քաղաքականությունը, պանիսլամիզմի և պանթյուրքիզմի գաղափարները չեն համապատասխանում Կոմինտերնի սկզբունքներին։ Համագումարում բերվեցին թուրքական կառավարության նիստում ասված Քեմալի խոսքերը. «Խալիֆի և սուլթանի անձերը սրբազան են և անձեռնմխելի», որ նրա կառավարությունը «ազատագրում է խալիֆի սրբազան անձը» նրա թշնամիներից[39]։

Վ. Ի. Լենինի գաղափարները, Հոկտեմբերի երկրի օրինակը, Կոմինտերնի ստրատեգիան ու տակտիկան Արևելքում նվաճում էին ամուր դիրքեր։ Ադրբեջանի, Բուխարայի, Խորեզմի, Հայաստանի, Վրաստանի սովետական հանրապետությունների կազմավորումը և ամրապնդումը, արևելյան երկրներում ազգային-ազատագրական, բանվորական, կանանց և երիտասարդական շարժումները, կոմունիստական, բանվորագյուղացիական, հեղափոխական կուսակցությունների ստեղծումը, լրիվ մերժում են անգլիացի գրող Հերբերտ Ուելսի թերահավատությունը բոլշևիկների ուժի, նրանց հետ դասակարգային միության ճնշված ժողովուրդների վստահության նկատմամբ։ «Դժվար է պատկերացնել, — ասում էր նա, — որ բոլշևիկները կարող էին հույս ունենալ, որ նրանց և համագումարում հավաքված դժգոհների խայտաբղետ ամբոխի միջև կհաստատվի դասակարգային համերաշխություն»[40]։

Բուխարայի, Ադրբեջանի և Հայաստանի սովետական հանրապետություններն ապացույցը և հաստատումն են այն բանի, — նշել է Վ. Ի. Լենինը, — որ սովետական իշխանության գաղափարներն ու սկզբունքները մատչելի և անհապաղ իրագործելի են ո՛չ միայն այն երկրներում, որոնք արդյունաբերական տեսակետից զարգացած են, ո՛չ միայն սոցիալական այնպիսի հենարանով, ինչպիսին պրոլետարիատն է, այլև այնպիսի հիմքով, ինչպիսին գյուղացիությունն է»[41]։

Պատմության ընթացքը ապացուցեց Վ. Ի. Լենինի դրույթների ճշմարտությունը։

ВЕЛИКИЙ ОКТЯБРЬ И РАЗОБЛАЧЕНИЕ ЗАХВАТНИЧЕСКОЙ ПОЛИТИКИ ИМПЕРИАЛИСТИЧЕСКИХ ДЕРЖАВ НА I СЪЕЗДЕ НАРОДОВ ВОСТОКА

ГРАНТ АВЕТИСЯН
Член-корр. АН Арм.ССР

Резюме

I съезд народов Востока являлся проводником идей В. И. Ленина по национально-колониальному вопросу, выдвинутому на II конгрессе Коминтерна. Несмотря на то, что делегаты придерживались разных политических взглядов и убеждений, съезд сыграл важную роль в разоблачении захватнической политики англо-французских, американских, немецких империалистов и младотурок.

38 Նույն տեղում, էջ 76—77։
39 Նույն տեղում, էջ 42։
40 Г. Дж. Уэллс. Նշվ. աշխ., էջ 47։
41 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 42, էջ 163։